



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ինտեգրված ուսուցման
անհրաժեշտությունը տվյալ առարկայի դասավանդման
գործընթացում

Առարկան՝ Քիմիա

Հետազոտող ուսուցիչ՝ Ծովինար Սահարունու Անտոնյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Օլիմպիական
հերթափոխի պետական մարզական քոլեջ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	
1.1 Ինտեգրված ուսուցման բովանդակությունը, տեսակները և առանձնահատկությունները	5
1.2 Ինտեգրված ուսուցման կազմակերպման սկզբունքները, փուլերը մակարդակներն ու մոդելները	8
ԳԼՈՒԽ 2. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ	
2.1 Ինտեգրված ուսուցման և ներառական կրթության նմանություններն ու տարբերությունները	14
2.2 Ինտեգրված ուսուցման կազմակերպումը Քիմիա առարկայի դասավանդման շրջանակներում	18
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	20
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականություն: «Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը տվյալ առարկայի դասավանդման գործընթացում» վերնագրով հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորված է մեր օրերում տարբեր առարկաների դասավանդման շրջանակներում ինտեգրված ուսուցման արդյունավետ կազմակերպման, կիրառվող մեթոդների կատարելագործման անհրաժեշտությամբ: Գաղտնիք չէ, որ ինտեգրված ուսուցումն այսօր մեծ տեղ ու դեր է զբաղեցնում ժամանակակից կրթական համակարգում: Այն բավականին լայն տարածում ունի աշխարհի շատ երկրներում և արդեն երկար ժամանակ է, ինչ ներդրվել ու կիրառվում է նաև ՀՀ կրթական համակարգում:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Հետազոտական աշխատանքի նպատակն առարկայի դասավանդման գործընթացում ինտեգրված ուսուցման դերի և նշանակության խորքային ուսումնասիրումն ու կատարելագործման անհրաժեշտության կարևորումն է: Վերոնշյալ նպատակի իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները**.

- *ուսումնասիրել* «ինտեգրված ուսուցում» հասկացության էությունը,
- *ներկայացնել* ինտեգրված ուսուցման առանձնահատկությունները, ուսուցման կազմակերպման սկզբունքները, փուլերը, մակարդակներն ու մոդելները,
- *ներկայացնել* ինտեգրված ուսուցման և ներառական կրթության միջև առկա տարբերությունները,
- *ուսումնասիրել* առարկայի դասավանդման գործընթացում ինտեգրված ուսուցման կազմակերպումն ու իրականացումը:

Աշխատանքի օբյեկտը և առարկան: Աշխատանքի ուսումնասիրության օբյեկտ է հանդիսանում ինտեգրված ուսուցումը, իսկ ուսումնասիրության առարկա՝ ինտեգրված ուսուցման էությունը, առանձնահատկությունները, ուսուցման կազմակերպման սկզբունքները, փուլերը, մակարդակներն ու մոդելները, ներառական կրթության հետ ունեցած տարբերությունները:

Աշխատանքի մեթոդաբանությունը: Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության ընթացքում կիրառվել են էմպիրիկ հետազոտության (դիտման, չափման, համեմատման), ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրման մեթոդները:

Աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից: Հետազոտական աշխատանքի ընդհանուր ծավալը՝ 22 էջ:

Առաջին գլխում (*«Ինտեգրված ուսուցման էությունը և նշանակությունը»*) ներկայացվել է «ինտեգրված ուսուցում» հասկացության էությունն ու բովանդակությունը, ինտեգրված ուսուցման առանձնահատկությունները, ինչպես նաև ուսուցման մոդելները: Աշխատանքի այս հատվածում խոսվել է նաև սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների դաստիարակման գործընթացում ինտեգրված ուսուցման դերի և նշանակության մասին:

Երկրորդ գլխում (*«Ինտեգրված ուսուցման միջազգային և տեղական փորձի վերլուծություն»*) ներկայացվել է ինտեգրված ուսուցման տեղն ու դերը ՀՀ կրթական համակարգում, ինտեգրված ուսուցման կազմակերպման և իրականացման գործընթացում առկա խնդիրներն ու դրանց կարգավորման համար անհրաժեշտ միջոցառումները:

Գրականության տեսություն: Հետազոտական աշխատանքի ուսումնասիրման ընթացքում տեղեկությունների կարևոր աղբյուր են հանդիսացել ինչպես հայ, այնպես էլ ռուս մանկավարժների և հոգեբանների աշխատություններն ու մեթոդական ձեռնարկները, որոնց միջոցով հնարավոր է եղել լիարժեք պատկերացում կազմել ինտեգրված ուսուցման առանձնահատկությունների, ուսուցման փուլերի և մոդելների, ինչպես նաև ՀՀ կրթական համակարգում առարկայի դասավանդման գործընթացում ինտեգրված ուսուցման կազմակերպման վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Ինտեգրված ուսուցման բովանդակությունը, տեսակները և առանձնահատկությունները

Այսօր ինտեգրացիան ընդգրկել է մարդկային կյանքի տարբեր ոլորտներն ու բնագավառները: Միջազգային մակարդակով ինտեգրացիայի գործընթացն իրենից ներկայացնում է տարբեր պետությունների փոխգործակցություն կամ միավորում, պետական մակարդակով այն իշխանության տարբեր ճյուղերի փոխգործակցությունն ու փոխկապակցվածությունն է, սոցիալական մակարդակում՝ հասարակության տարբեր հատվածների, այսինքն՝ անհատների միավորումն է, իսկ գիտությունում՝ մեկ բնագավառի զարգացումն է՝ մյուս բնագավառի հետ սերտ համագործակցության միջոցով:

Մինչ «ինտեգրված ուսուցում» հասկացության էության, ինտեգրված ուսուցման կազմակերպման մոդելներն ու առանձնահատկությունները մասին խոսելը, տանք «ինտեգրացիա» բառի սահմանումն ու մեկնաբանումը: Աշոտ Հայրապետյանի «Օտար բառերի բառարան»-ում «ինտեգրացիա» բառն առաջին հերթին սահմանվում է որպես մասերի ամբողջացում, ներգրավում¹: «Ինտեգրացիա» բառը գրեթե նույն իմաստն է արտահայտում օտար բառերի և այլ բացատրական բառարաններում:

Այժմ տանք «ինտեգրված ուսուցում» հասկացության մեկնաբանությունը: Մանկավարժական գործունեության գործընթացում «ինտեգրացիա» հասկացության ներքո հասկանում ենք զարգացման գործընթացի կողմերից մեկը, որը կապված է նախկինում տարբեր մասերի միավորման հետ մեկ ամբողջության մեջ: Եվ այս գործընթացը կարող է տեղի ունենալ ինչպես արդեն գոյություն ունեցող համակարգի, այնպես էլ նոր ձևավորված համակարգի շրջանակներում: Ուսուցման գործընթացում մենք ևս բախվում ենք ինտեգրացման գործընթացի հետ կապված որոշակի խնդիրների հետ:

¹ Տե՛ս Հայրապետյան Ա., «Օտար բառերի բառարան», Երևան, 2011, էջ 230:

Հանրակրթական հաստատություններում ուսուցման գործընթացում մենք հաճախ բախվում ենք ինտեգրացման կազմակերպման խնդիրների հետ: Դժվար թե գտնվի որևէ դպրոցական առարկա, որի բովանդակային իմաստը փոխկապակցված չլինի մյուս առարկաների բովանդակության հետ: Այսպես, ֆիզիկան գործնականում ուսումնասիրելն անհնար է, եթե սովորողը չունի բավարար գիտելիքներ մաթեմատիկայից: Դժվար է սովորել նաև պատմություն կամ գրականություն՝ առանց պատմական իրադարձությունների վերլուծության: Ֆիզիկական կուլտուրայի դասընթացներ կազմակերպելիս, հարկավոր է հաշվի առնել սովորողների օրգանիզմի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և իմանալ սովորողների համար ֆիզիկական ծանրաբեռնվածության թույլատրելի սահմանաչափը:

Այս բոլոր դեպքերում տարբեր առարկաներ և դրանց համապատասխան ուսումնական գործողություններ ինտեգրվում են բազմազան և բազմակողմանի միասնական ուսումնական գործընթացում, որը գիտականորեն հիմնավորված և գործնականում նպատակահարմար է: Սակայն առայժմ ինտեգրված ուսուցման կառուցվածքը շարունակում է մնալ անորոշ, որի արդյունքում էլ ինտեգրված ուսուցման կազմակերպումն այդքան էլ արդյունավետ մեթոդաբանությամբ չի իրականացվում, քանի որ լիարժեք և արդյունավետ փոխկապակցված չէ մի շարք առարկաների գործունեության հետ:

Ինտեգրված ուսուցման կարևորության մասին խոսելիս, շատ կարևոր է հասկանալ վերջինիս բովանդակությունը: Այսպես, Ա.Մ. Պրոխորովի հանրագիտարանային բառարանում «ինտեգրացիա» բառը նշանակում է համակարգի առանձին տարբերակված մասերի և գործառույթների միացում, ինչպես նաև գործընթաց, որը հանգեցնում է նման իրավիճակի²: Ինտեգրված ուսուցման վերաբերյալ մեկնաբանությունը հստակեցված է Ն.Վ. Կուզմինայի կողմից, ով իր աշխատության մեջ նշել է, որ ձևավորված ամբողջությունը ձեռք է բերում իր մեջ ինտեգրված մասերի որակի երանգներ³: Իսկ ըստ Բ.Ֆ. Լոմովի, ինտեգրացիան իրենից ներկայացնում է վերջինիս տարրերի գործունեության արդյունք, որը

² Ст' у Прохоров А., «Советский энциклопедический словарь», Москва, «Советская энциклопедия», 1986, с. 495.

³ Ст' у Кузьмина Н., «Очерки психологического труда учителя», Ленинград: Изд-во ЛГУ, 1967, 60 с.

բնորոշվում է ամբողջական համակարգի համաձայնեցվածությամբ, կարգավորվածությամբ և կայունությամբ⁴:

Վերոնշյալ երեք հեղինակների աշխատությունների տարեթվերից պարզ է դառնում, որ ինտեգրացիայի, որպես գործընթացի նկատմամբ հետաքրքրությունը բավականին մեծ է եղել խորհրդային տարիներին, հատկապես՝ 1960 – 80-ական թվականներին: Հետագայում կրթական համակարգում ինտեգրացված գործընթացների գաղափարի զարգացումն առավել ակտիվ ընթացավ հատկապես հետխորհրդային շրջանում:

Ինտեգրված ուսուցման առանձնահատկությունները պայմանավորված են նաև ուսուցման իրականացման երեք հիմնական տեսակներով: Դրանք են՝ միջառարկայական, վերառարկայական և ներառարկայական տեսակները: Ինտեգրված ուսուցման տեսակների նկարագիրն ու առանձնահատկությունները ներկայացված են աղյուսակ

Աղյուսակ 1. Ինտեգրված ուսուցման տեսակների առանձնահատկությունները

№	Սկզբունք	Նկարագրություն
1.	<i>Ներառարկայական մոդել</i>	Ինտեգրված ուսումնական ծրագրի զարգացումը հիմնված է բազմառարկայական թեմաներին (ուսումնական ծրագիր, ընտրվում է թեման, որոշվում են թեմային անդրադարձող առանձին առարկաները, դասավանդման ընթացքում ուսումնասիրվում է նույն երևույթը տարբեր գիտություններում առկա տարբեր ընկալումների տեսանկյունից):
2.	<i>Միջառարկայական մոդել</i>	Այս մոտեցման դեպքում ուսումնասիրվող թեման դառնում է դասավանդման առանցքը, որին տարբեր առարկաներ մատուցում են իրենց արդյունքները:
3.	<i>Վերառարկայական (անդրառարկայական) մոդել</i>	Կենտրոնանում է նույն թեման շոշափող առանձին բաղադրիչներին: Նշվածը վերաբերվում է այն ուսումնական ծրագրին, որը դուրս է գալիս ուսումնական առանձին առարկաների սահմաններից: Այս ինտեգրումը առավել համապարփակ է և այս դեպքում լիովին ջնջվում են առանձին առարկաների սահմանները:

⁴ Ст' у Ломов Б., «Проблемы общения в психологии», Москва, 1981, 524 с.

1.2 Ինտեգրված ուսուցման կազմակերպման սկզբունքները, փուլերը մակարդակներն ու մոդելները

Այսօր որոշ գիտնականներ ինտեգրացիոն ամբողջությունը դիտարկում են հորիզոնական հարթությունում որպես ամուր միջառարկայական կապեր տարբեր ոլորտներից, գիտելիքների, հմտությունների և կարողությունների միասնություն, իսկ ուղղահայաց հարթությունում՝ շարունակականություն կրթական սանդուղքի տարբեր աստիճանների միջև, այս աստիճանների միաձուլումը մեկ աճող շարքի մեջ, որն ընդգրկում է կրթության բոլոր փուլերը⁵:

Ելնելով վերոնշյալից, «ինտեգրացված ուսուցում» հասկացության վերաբերյալ կարող ենք անել հետևյալ եզրակացությունները⁶.

1. Ինտեգրման գործընթացի հիմքերը վերադառնում են դասական մանկավարժությանը և կապված են միջառարկայական կապերի գաղափարի հետ, որը ձևավորվում է ուսումնական նյութի բովանդակության մեջ բնության ամբողջականությունն արտացոլելու ուղիներ որոնելիս;
2. Ինտեգրացման գործընթացի հատկանիշներ են համարվում՝
 - նախկինում անջատված տարրերի փոխգործակցությունը,
 - փոխգործակցող տարրերի քանակական, որակական և տրամաբանական բովանդակային փոխակերպումները,
 - կրթական գործունեության կազմակերպում՝ հիմնված դրա բաղկացուցիչ մասերի ամբողջական, փոխկապակցված ուսումնասիրության վրա:

Ուսուցման մեջ ինտեգրացիան իրականացվում է միաձուլման ճանապարհով⁷.

- մեկ սինթեզված դասընթացում տարբեր առարկաների տարրերը,

⁵ St' u Мещеряков Б., Большой психологический словарь, 4-е изд., расш., Москва, 2003, с. 672.

⁶ St' u Мартынова Р., «Дидактическая сущность интегрированного процесса обучения» – https://scienceandeducation.pdpu.edu.ua/doc/2009/10_2009/47.pdf.pdf (բացված՝ 12. 09. 2023)

⁷ St' u Зягвинский В., Теория обучения: Современная интерпретация», Москва, «Академия», 2001, с. 192.

- ուսումնական տարբեր առարկաների գիտական հասկացություններն ու մեթոդները վերածվում են ընդհանուր գիտական հասկացությունների և ճանաչման մեթոդների:

Ինտեգրված ուսուցման առանձնահատկությունը պայմանավորված է մի շարք սկզբունքներով, որոնք ներկայացված են աղ. 2-ում.

Աղյուսակ 2. Ինտեգրված ուսուցման կազմակերպման սկզբունքները

№	Սկզբունք	Նկարագրություն
1.	<i>Գիտելիքների սինթեզավորման (համադրման) սկզբունք</i>	Գիտելիքների սինթեզավորման կամ համադրման սկզբունքը բաղկացած է հիմնական դասընթացի մասին տեղեկատվության ընկալումից, սակայն գիտելիքի տարբեր ոլորտներից, ինչը նպաստում է որը նպաստում է մտածողության լայն զարգացմանը ուսումնասիրված յուրաքանչյուր խնդրի շրջանակներում:
2.	<i>Խորացված գիտելիքների սկզբունք</i>	Խորացված գիտելիքների սկզբունքը, որը բաղկացած է ուսումնասիրվող թեմայի էության մեջ ավելի խորը ներթափանցումից, ինչը նպաստում է խորը մտածողության զարգացմանը, այսինքն ոչ միայն երևույթի, այլև դրա առաջացման պատճառների և բազմաթիվ առանձնահատկությունների յուրացումը:
3.	<i>Խնդրի արդիականության սկզբունք</i>	Խնդրի արդիականության սկզբունքը, որը կայանում է վերջինիս գործնական նշանա-կությունում, այսինքն՝ ձեռք բերված գիտելիքների յուրաքանչյուր չափաբաժնի պարտադիր ներդրում ցանկացած գործնական իրավիճակում, որն ուժեղացնում է վերապատրաստման գործնական կողմնորոշումը:
4.	<i>Այլընտրանքայինության սկզբունք</i>	Որոշումների կայացման այլընտրանքայինության սկզբունքը, որը բաղկացած է ոչ ստանդարտ խնդրի լուծման հնարավորության մշակումից՝ ինքնուրույն ընտրելով նախկինում կանխատեսված լուծումներից մեկը կամ ստեղծելով նոր գաղափարներ, ինչը նպաստում է մտածողության ինքնատիպությանն ու ճկունությանը:
5.	<i>Ինքնակրթության սկզբունք</i>	Ինքնակրթության սկզբունքը կայանում է սովորողների մոտ արտադասարանային ժամերին ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ձեռք բերելու անհրաժեշտության ձևավորմամբ: Այս սկզբունքի իրագործումը ենթադրում է սովորողներին սկզբնաղբյուրների հետ աշխատանքի ուսուցում, ինքնուրույն տեղեկությունների հավաքագրում, վերլուծում և ստացված արդյունքների համադրում, ինչպես նաև արդեն առկա միասնական իմաստային խմբերի միավորում:

Ինտեգրված ուսուցման սկզբունքները ոչ միայն հիմնվում են ընդհանուր դիդակտիկ սկզբունքների տեսանելիության, գիտականության, ամրության, հասանելիության, համակարգվածության և հետևողականության, ուսուցման ինքնուրույնության և ակտիվության վրա, այլև ստեղծում բարենպաստ պայմաններ դրանց արդյունավետ իրականացման համար: Այսպես, օրինակ ուսումնասիրվող նյութի ներքո պետք է հասկանալ ոչ միայն հավաստի և գիտական փաստեր, այլև հարակից գիտություններում դրանց լուսաբանման և հաստատման հնարավորությունը:

Ինտեգրված ուսուցման իրականացումը տարբեր գիտնականների, մանկավարժների և հոգեբանների կողմից բաժանվել է տարբեր փուլերի: Ե.Վ. Նիկուլինն իր «Ֆիզիկական կուլտուրայի տեսություն և պրակտիկա» աշխատության մեջ ինտեգրված ուսուցումը բաժանվում է երեք հիմնական փուլերի⁸, որոնց նկարագիրը ներկայացված է աղ. 3-ում.

Աղյուսակ 3. Ինտեգրված ուսուցման փուլերն ու դրանց առանձնահատկությունները

№	Փուլ	Նկարագրություն
1.	<i>Առաջին փուլ</i>	Այս փուլում վերլուծության են ենթարկվում նյութերն ու թեմաները, որոնք կարող են ուսումնասիրված լինել հիմնարար առարկայի շրջանակներում:
2.	<i>Երկրորդ փուլ</i>	Այս փուլը նվիրված է նյութին, որը դուրս է գալիս հիմնարար առարկայի ուսումնասիրության շրջանակներից և ներառում է թեմաներ, որոնք կարող են յուրացվել այլ առարկաների ուսումնասիրության ընթացքում:
3.	<i>Երրորդ փուլ</i>	Երրորդ և առանցքային փուլի նպատակը սպորտի և ֆիզիկակալ կուլտուրայի մասնագետների պրոֆեսիոնալ գործունեության ամբողջական կառուցվածքի ձևավորումն է, բոլոր մասնագիտական որակների և կարողությունների տիրապետումը, սովորողների առանձին գործառույթների իրականացում:

⁸ St' u Никулина Е., «Интегрированное обучение в профессиональной подготовке студентов факультета физической культуры» // Научно-теоретический журнал «Теория и практика физической культуры», №4, 2006.

Եվ համաձայն վերոնշյալ փուլերի, Նիկուլինն առաջարկում է ինտեգրված ուսուցման եռամսյակային համակարգը, որը ներկայացված է **աղ. 4**-ում.

Աղյուսակ 4. Ինտեգրված ուսուցման երեք մակարդակները

№	Մակարդակ	Նկարագրություն
1.	<i>Առաջին մակարդակ</i>	<p>Ինտեգրացիայի առաջին և ամենաբարձր մակարդակը միջառարկայական կապերի ամբողջության մակարդակն է, որն ավարտվում է նոր առարկայի ձևավորմամբ, կրում է ինտեգրվող բնույթ և ունի սեփական հետազոտության առարկան: Որպես ինտեգրման հիմնական աղբյուր, այս մակարդակում հանդես են գալիս համալիր անցումային գիտությունները և դիտարկվող մակարդակում ընկած է ինտեգրված փոխգործակցության անցումային ձևը:</p> <p>Շատ կարևոր է նշել, որ այս մակարդակում իրականացվում է ամբողջական բովանդակային և գործընթացային ինտեգրացում նոր ամբողջական կրթական առարկայի շրջանակներում և լուծվում են ինտեգրված կուրսի բոլոր դիդակտիկ խնդիրները:</p>
2.	<i>Երկրորդ մակարդակ</i>	<p>Ինտեգրված ուսուցման երկրորդ մակարդակը դիդակտիկ սինթեզի (համադրման) մակարդակ է, որը բնութագրում է ոչ միայն ուսումնական առարկաների բովանդակային ինտեգրացիան, այլև դրանցով որոշվող գործընթացային սինթեզը, որն, առաջին հերթին, առաջարկում է ուսումնական դասընթացների ձևերի ինտեգրացում:</p>
3.	<i>Երրորդ մակարդակ</i>	<p>Ինտեգրված ուսուցման երրորդ մակարդակն իրենից ներկայացնում է միջառարկայական կապերի մակարդակ, որը փոխկապակցված է այնպիսի դիդակտիկ առաջադրանքների լուծման հետ, ինչպիսիք են սովորողների գիտելիքների արդիականացումը, դրանց ընդհանրացումն ու համակարգումը:</p> <p>Ընդ որում, միջառարկայական կապերը դիտարկվում են որպես ուսուցման միջոց, պայման, սկզբունք և կրթության բովանդակության որոշիչ գործոն, որպես ուսուցչի և սովորողի ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատուկ համակարգ: Միջառարկայական կապերի մակարդակում ինտեգրման հիմնական աղբյուր են հանդես գալիս ուսուցման բովանդակության ընդհանուր կառուցվածքային տարրերը, որոնց տեղափոխումը հնարավոր է իրականացնել յուրաքանչյուր ուսումնական առարկայի ուղղությամբ:</p>

Ինտեգրված ուսուցման գործընթացում շատ կարևոր նշանակություն է տրվում հատկապես ուսուցման այս ձևի կազմակերպման մոդելներին, որոնք ներկայացված են աղ. 5-ում⁹.

Աղյուսակ 5. Ինտեգրված ուսուցման մոդելները

№	Մոդելի անվանում	Նկարագրություն
1.	<i>Մշտական ամբողջական ինտեգրման մոդել</i>	Ինտեգրված ուսուցման այս մոդելը կիրառելի է, եթե երեխայի հոգեբանական, ֆիզիկական և զգացմունքային իրավիճակում չեն նկատվում առանձնակի շեղումներ, նրա զարգացման մակարդակը մոտ է նորմային, իսկ դպրոցում աշխատում է ուղղիչ (կորեկցիոն) մանկավարժ: Հատուկ երեխաները հաճախում են սովորական դպրոցներ, սովորում առողջ երեխաների հետ միասին և, անհրաժեշտության դեպքում, ստանում են որակավորված մասնագետի աջակցությունը:
2.	<i>Մշտական ոչ ամբողջական ինտեգրման մոդել</i>	Մշտական ոչ ամբողջական ինտեգրման մոդելը կիրառվում է, երբ երեխայի մոտ նկատվում են որոշակի շեղումներ: Նման երեխաների բավականին դժվար է ներկա լինել իր հասակակից առողջ երեխաների հետ և նրանց հարկավոր է հաճախել հատուկ դպրոցներ: Նրանց հարկավոր է ցուցաբերել հատուկ մասնագիտական աջակցություն: Այս մոդելը ենթադրում է, որ որոշ առարկաներ երեխան անցնելու է ամբողջ դասարանի, իսկ որոշ առարկաներ՝ կորեկցիոն մանկավարժի վերահսկողության ներքո: Այս մոդելի կիրառումը որոշվում է ուսուցչի և ծնողի համատեղ քննարկման արդյունքում:
3.	<i>Մասնավոր ինտեգրման մոդել</i>	Մասնավոր մոդելի դեպքում երեխան հաճախում է միայն դպրոցի որոշ առարկաներին կամ հաճախում դպրոց՝ դասերի ավարտից հետո: Մնացյալ ժամանակը երեխան սովորում է անհատական ծրագրով:
4.	<i>Ժամանակավոր ինտեգրման մոդել</i>	Ժամանակավոր ինտեգրումն այնպիսի մոդել է, որը ենթադրում է անհատական ուսուցման կազմակերպում, որն իրականացվում է հատուկ մշակված ծրագրով: Երեխաների կոլեկտիվում հաշմանդամություն ունեցող երեխան ընդգրկվում է ամիսը մի քանի անգամ՝ մասնակցելով համադպրոցական գործերին, դաստիարակչական բնույթի արտադասարանային միջոցառումներին:
5.	<i>Էպիզոդիկ (դրվագային) ինտեգրման մոդել</i>	Էպիզոդիկ ինտեգրման մոդելն առավել համապատասխանում է այն ուսումնական հաստատություններին, որոնցում անհնար է կառուցել ինտեգրված ուսուցում ամբողջական ձևաչափով (օրինակ՝

⁹ St' u Интегрированное обучение – что это такое, модели и формы – <https://nadpo.ru/academy/blog/integrirovannoe-obuchenie-cto-eto-takoe-modeli-i-formy/> (բացված՝ 14. 09. 2023)

		արատաբանի բացակայությամբ պայմանավորված): Ինտեգրումն իրականացվելու է միջոցառումների պարբերաբար՝ նպաստելով հատուկ երեխաների սոցիալականացմանը:
6.	Կոմբինացված (համակցված) ինտեգրման մոդել	Համակցված ինտեգրման մոդելի էությունն ու առանձնահատկությունը կայանում է առանձին ներառական կրթության բաղադրիչներում և մոտեցումներում: Նման մոդել, որպես կանոն, օգտագործում են ոչ մեծ բնակելի վայրերում, այնպիսի վայրերում, որտեղ սովորաբար ինտեգրված ուսուցում կազմակերպելը որոշակի դժվարությունների է հանդիպում: Ինտեգրված ուսուցման այս մոդելն առավել համապատասխանում է այն երեխաներին, որոնց մոտ շեղումները նորմալից մի փոքր քիչ են, հակառակ պարագայում իրենց տարիքակիցների հետ հավասարապես յուրացնել ուսումնական ծրագիրը և դասավանդվող առարկան նրա մոտ չի ստացվի:

Այսպիսով, ինտեգրված ուսուցման ուսումնասիրության արդյունքում մենք եկանք այն եզրահանգման, որ այս գործընթացն իրենից ներկայացնում է մանկավարժ-ուսուցչի և սովորողի փոխկապակցված գործունեություն, որն ապահովում է տարբեր առարկաներից կազմված ամբողջական առարկայի բովանդակության լիարժեք յուրացումը, որտեղ առարկաներից մեկը համարվում է գերիշխող, իսկ մյուսները՝ ուղեկցող և փոխլրացնող:

ԳԼՈՒԽ 2. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

2.1 Ինտեգրված ուսուցման և ներառական կրթության նմանություններն ու տարբերությունները

Մինչ առարկայի դասավանդման շրջանակներում ինտեգրված ուսուցման կազմակերպման մասին խոսելը, հարկ ենք համարում անդրադառնալ ինտեգրված ուսուցման և ներառական կրթության տարբերակիչ կողմերին և առանձնահատկություններին, ինչը հաճախ շփոթության առարկա է հանդիսանում հասարակական քննարկումներում: *Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար*¹⁰:

Ներառական կրթությունը (ֆրանս.՝ *inclusif* – ներառող) համընդհանուր կրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության հասանելիությունը բոլորի համար, հատկապես՝ ԿԱՊԿՈՒ (լեզվական, տեսողական, շարժական, մտավոր և այլն) երեխաների համար¹¹: Այսօր ներառական կրթությունը ՀՀ տարածքում կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ: Այսպես, 1993թ. մայիսին ընդունվեց ՀՀ օրենքը «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», որով հիմնականում սահմանվեց ՀՀ տարածքում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, ինչպես նաև հանրապետությունում հաշմանդամներին մյուս քաղաքացիների հետ հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական

¹⁰ St' u Назарова Н., «Интегрированное (инклюзивное) образование: генезис и проблемы внедрения» // Социальная педагогика, 2010, № 1, с. 77 – 87.

¹¹ St' u Ермакова Л., «Сущность инклюзивного образования», Чебоксары, 2017, с. 19 – 23.

քաղաքականության հիմնադրույթները¹²: Բացի այդ, 2005թ. մայիսի 25-ին ընդունվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը¹³, որը ևս վերաբերվում էր ԿԱՊԿՈՒ երեխաների ներառական կրթության կազմակերպմանն ու կարգավորմանը:

ՀՀ Ազգային ժողովը 2014թ. դեկտեմբերի 1-ին ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համաձայն օրենքի՝ մինչև 2025թ. օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը:

- Ներառական կրթությունը՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:
- Կկիրառվի երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից:
- Մինչև 2022թ. օգոստոսի 1-ը՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում գործող առնվազն մեկ, Երևան քաղաքում՝ առնվազն չորս հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն

¹² Տե՛ս Սայադյան Լ., Մանվելյան Ս., «Ներառական կրթությունը Հայաստանում» (հոդվածների ժողովածու), Երևան, 2003, էջ 18:

¹³ Տե՛ս Arlis: Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք» – <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166> (ընդունված՝ 25. 05. 2005)

վերակազմակերպվելու է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի:

Ներառական կրթության առանձնահատկությունն այն է, որ կրթությունը պետք է հիմնվի բազմազանության վրա՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները և կարիքները: Դպրոցը, իր հերթին, պետք է բացահայտի և չեզոքացնի ուսումնական գործընթացում լիարժեք մասնակցությանը խոչընդոտող գործոնները բոլոր աշակերտների համար: Իսկ պետական մակարդակով ներառական կրթության համար պետք են խորքային և երկարաժամկետ փոփոխություններ, դրանց իրականացմանն ուղղված աջակից կառույցներ և ռեսուրսներ, ինչպես օրինակ՝ ուսուցիչների, վարչական անձնակազմի, աշակերտների և ծնողների հատուկ կենտրոններ¹⁴:

Ներառական կրթությունը բնութագրվում է վեց հիմնական առանձնահատկություններով.

1. կրթությունը պետք է հիմնվի բազմազանության, այլ ոչ թե միանմանության սկզբունքի վրա;
2. կրթական գործընթացը պետք է կազմակերպվի այնպիսի մեթոդներով և մոտեցումներով, որոնք ուղղված են յուրաքանչյուր երեխայի առանձնահատկություններից բխող կարիքների բավարարմանը;
3. դպրոցները պետք է մշակեն այնպիսի առարկայական պլաններ, որոնք կբալանսավորեն միասնականությունը և յուրահատկությունը;
4. դպրոցը պետք է բացահայտի և չեզոքացնի ուսումնական կյանքում լիարժեք մասնակցությանը խոչընդոտող գործոնները բոլոր աշակերտների համար;
5. ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթացների կազմակերպման և կառավարման խորքային և երկարաժամկետ փոփոխություններ;

¹⁴ Տե՛ս Ամփոփ, «Ներառական կրթությունը Հայաստանի դպրոցներում» – <https://ampop.am/inclusive-education-in-armenia/> (05. 05. 2018)

6. ներառական կրթությունը ենթադրում է աջակից կառույցների և ռեսուրսների ստեղծում՝ ուսուցչական, ադմինիստրատիվ անձնակազմի, աշակերտների և ծնողների և ներառական կրթության համակարգի այլ շահառուների համար¹⁵:

Աղ. 6-ում ներկայացված են ինտեգրված ուսուցման և ներառական կրթության համեմատական վերլուծության պատկերը¹⁶.

Աղյուսակ 6. Ինտեգրված ուսուցման և ներառական կրթության տարբերությունները

Ներառական կրթություն	Ինտեգրված ուսուցում
<ul style="list-style-type: none"> • Երեխան սովորում է ընդհանուր դասարանում, • Երեխան պարտավոր չէ յուրացնել ամբողջ ուսումնական ծրագիրը՝ իր ամբողջական ծավալով հանդերձ, • Դասարանները կահավորված են հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքների համապատասխան չափանիշներով, • Ուսումնական ծրագրի և դասավանդվող առարկայի նյութի յուրացման գործում երեխային օգնում է դաստիարակը: 	<ul style="list-style-type: none"> • Երեխան սովորում է ընդհանուր դպրոցում, • Երեխան անպայման յուրացնում է ամբողջ ուսումնական ծրագիրը, • Դասարանները սովորական են, • Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կազմակերպում են հավելյալ պարապմունքներ, անձնական խորհրդակցություններ և աջակցություն:

Ինչպես տեսնում ենք, ինտեգրված ուսուցման և ներառական կրթության մեջ կան թե՛ որոշակի նմանություններ և թե՛ տարբերակիչ առանձնահատկություններ: Ուստի սխալ է դրանք նույնացնել կամ միմյանց նմանեցնել, ինչն անում է հասարակության որոշ հատվածը:

¹⁵ Տե՛ս ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում // Կրթական հետազոտությունների և գնահատման կենտրոն, Երևան, 2013, էջ 21:

¹⁶ Տե՛ս Инклюзивное и интегрированное обучение: в чем отличия – <https://kedu.ru/press-center/articles/inklyuzivnoe-i-integrirovannoe-obuchenie-v-chem-otlichiya/> (բացված՝ 16. 09. 2023)

2.2 Ինտեգրված ուսուցման կազմակերպումը Քիմիա առարկայի դասավանդման շրջանակներում

Ինչպես արդեն պարզ դարձավ, ինտեգրված ուսուցումն, առաջին հերթին, ենթադրում է միջառարկայական կապերի էական զարգացում և խորացում, որոնք միջգիտական կապերի անալոգ են հանդիսանում և արտահայտվում են տարբեր առարկաների համաձայնեցված դասավանդումից մինչև դրանց խորը փոխգործակցության: Տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրումն իրականացվում է ինտեգրված դասընթացի միջոցով: Ինտեգրված դասերի համակարգն ընկած է ինտեգրված ուսուցման հիմքում: Ինտեգրված դասը հատուկ կազմակերպված դասն է, որի նպատակը կարող է իրագործվել միայն գիտելիքների և տարբեր առարկաների միավորման պարագայում, որոնք ուղղված են որևէ խնդրի դիտարկմանը և լուծմանը, ինչը թույլ է տալիս սովորողի կողմից հասնել հետազոտվող հարցի համադրվող ընկալմանը, որն իր մեջ ներդաշնակ կերպով համադրում է տարբեր գիտություններ, որոնք ունեն գործնական ուղղվածություն:

Ինտեգրված դասի նպատակները հետևյալն են՝

- ուսումնասիրվող թեմայի բովանդակությունում առավել խորքային ներթափանցում և ընկալում,
- դասավանդվող առարկաների նկատմամբ սովորողի հետաքրքրության մեծացում,
- տվյալ թեմայով հարցերի ամբողջական և համադրված ուսումնասիրում,
- ուսումնական ժամանակի խնայում և ճիշտ օգտագործում,
- տարբեր առարկաների գիտելիքների լայն օգտագործում,
- միջառարկայական կապերի խորացված իրականացում և այլն:

Ինտեգրացիան պատկանում է դիդակտիկ սկզբունքների շարքին: Ինտեգրված դասը նպաստում է երեխաների ամբողջական աշխարհայացքի ձևավորմանը: Առարկայի դասավանդման գործընթացում ինտեգրված ուսուցման կազմակերպման նպատակն ինտեգրված ուսուցման էության, որպես ուսուցման նորարարական ձևի վերլուծումն է:

Քիմիա առարկայի դասավանդման շրջանակներում ինտեգրված ուսուցման առջև դրվում են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել ինտեգրված դասերի պահանջարկի պատճառները,
- բացահայտել ինտեգրման առավելություններն ու խնդիրները,
- բացահայտել ինտեգրված ուսուցման արդյունքներն ու նշանակությունը,
- մշակել պլան-կոնսպեկտ քիմիա առարկայի ինտեգրված դասի կազմակերպման համար:

Քիմիա առարկայի դասավանդման գործընթացում հետազոտության օբյեկտը Քիմիա առարկայի ինտեգրված ուսուցումն է, իսկ հետազոտության առարկան՝ Քիմիա առարկայի ինտեգրված ուսուցման տարատեսակ ձևերը: Քիմիա առարկայում ինտեգրված ուսուցումը հնարավոր է իրականացնել մի քանի դասի ընթացքում, ինչպիսիք են ինտեգրված ուսումնական կուրսերը և ինտեգրված դասերը: Առավել տարածված են հատկապես ինտեգրված դասերը: Նման դասերի կազմակերպումը դասավանդվող առարկայի շրջանակներում և դրանցում այնպիսի առարկաների ուսուցիչների մասնակցությունը, որոնցից են Քիմիայի ուսուցիչները, սովորողների համար հնարավորություն է ստեղծվում առանց դժվարությունների ընկալել նոր տեղեկությունները, նպաստում մտածողության զարգացմանը, ապահովում բարձր ճանաչողական ակտիվություն և նպաստում դասավանդվող առարկայի հանդեպ հետաքրքրության մեծացմանը:

Քիմիա առարկայի դասավանդման շրջանակներում ինտեգրված ուսուցման արդյունավետ կազմակերպման համար հարկավոր է հետևել որոշ դիդակտիկ մոտեցումների իրականացմանը: Այդ մոտեցումները պետք է համապատասխանեն ուսումնական գործընթացի նպատակին և խնդիրներին, ինչպես նաև փոխկապակցված լինել նախկինում ուսումնասիրված նյութի հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտական հետազոտական աշխատանքի ուսումնասիրության արդյունքում եկանք այն եզրակացության, որ ինտեգրման գործընթացը բավականին երկարատև և միաժամանակ նաև խոչընդոտներով ու բարդություններով լի գործընթաց է, որն իրենից ներկայացնում է միջառարկայական կապերի բարձր ձև: Շատ կարևոր է հասկանալ, որ ժամանակակից ուսումնական հաստատություններում առարկաների ինտեգրումն իրական անհրաժեշտություն է, որը հարկավոր է բոլոր նրանց, ովքեր զբաղված են հիմնարար մանկավարժական ուսուցմամբ:

Ավարտական հետազոտական աշխատանքի ուսումնասիրության արդյունքում եկանք նաև այն եզրակացության, որ ինտեգրված առարկաների առավելությունը կայանում է հետևյալում.

1. Ինտեգրված առարկաները նպաստում են ուսուցման մոտիվացիայի բարձրացմանը, սովորողների ճանաչողական հետաքրքրության ձևավորմանը;
2. Ինտեգրված առարկաները նպաստում են ամբողջական, գիտական համակարգի ձևավորմանը և տարբեր տեսանկյուններից երևույթների դիտարկմանը;
3. Ընդհանուր առմամբ, ինտեգրված առարկաներն, ի տարբերություն սովորական առարկաների, նպաստում են երեխաների խոսքի, ստացված տեղեկությունները համեմատելու, ընդհանրացնելու և հետևություններ անելու կարողության զարգացմանը;
4. Նման բնույթի դասերը ոչ միայն խորացնում են առարկայի մասին պատկերացումը, այլև նպաստում անձի բազմակողմանի, ներդաշնակ և մտավոր զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրականություն

1. Հայրապետյան Ա., «Օտար բառերի բառարան», Երևան, 2011:
2. ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում // Կրթական հետազոտությունների և գնահատման կենտրոն, Երևան, 2013:
3. Ермакова Л., «Сущность инклюзивного образования», Чебоксары, 2017.
4. Зягвинский В., Теория обучения: Современная интерпретация», Москва, «Академия», 2001.
5. Кузьмина Н., «Очерки психологического труда учителя», Ленинград: Изд-во ЛГУ, 1967.
6. Ломов Б., «Проблемы общения в психологии», Москва, 1981.
7. Мещеряков Б., Большой психологический словарь, 4-е изд., расш., Москва, 2003.
8. Назарова Н., «Интегрированное (инклюзивное) образование: генезис и проблемы внедрения» // Социальная педагогика, 2010, № 1.
9. Никулина Е., «Интегрированное обучение в профессиональной подготовке студентов факультета физической культуры» // Научно-теоретический журнал «Теория и практика физической культуры», №4, 2006.
10. Прохоров А., «Советский энциклопедический словарь», Москва, «Советская энциклопедия», 1986.

Համացանցային ռեսուրսներ

11. Arlis: Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք – <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166> (ընդունված՝ 25. 05. 2005)

12. Инклюзивное и интегрированное обучение: в чем отличия – <https://kedu.ru/press-center/articles/inklyuzivnoe-i-integrirovannoe-obuchenie-v-chem-otlichiya/> (բացված՝ 16. 09. 2023)
13. Интегрированное обучение – что это такое, модели и формы – <https://nadpo.ru/academy/blog/integrirovannoe-obuchenie-cto-eto-takoe-modeli-i-formy/> (բացված՝ 14. 09. 2023)
14. Мартынова Р., «Дидактическая сущность интегрированного процесса обучения» – https://scienceandeducation.pdpu.edu.ua/doc/2009/10_2009/47.pdf.pdf (բացված՝ 12. 09. 2023)
15. Ամփոփ, «Ներառական կրթությունը Հայաստանի դպրոցներում» – <https://ampop.am/inclusive-education-in-armenia/> (05. 05. 2018)
16. Սայադյան Լ., Մանվելյան Ս., «Ներառական կրթությունը Հայաստանում» (հոդվածների ժողովածու), Երևան, 2003, էջ 18: